**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.1/7345-2026

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ**

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-1227-24.12.2025-ՊԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2026 թվականի մարտի 6-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 194 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Պետրոս Քացախյան

Ազգային ժողովի հետ կապերի վարչության խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող

Հեռ. 010515686

Էլ փոստ՝ petros.qatsakhyan@gov.am

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-1227-24.12.2025-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով (այսուհետ նաև՝ նախագիծ) առաջարկվում է որպես գաղտնի քննչական գործողություն նախատեսել նաև «Վերահսկելի մատակարարում և գնում» միջոցառումը, որը ներկայում բացառապես օպերատիվհետախուզական միջոցառում է:

Մասնավորապես՝ նախագծի 5-րդ հոդվածով առաջարկվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը լրացնել նոր՝ հետևյալ բովանդակությամբ 251.1-ին հոդվածով՝

«Հոդված 251.1. Վերահսկելի մատակարարումը և գնումը

1. Վերահսկելի մատակարարումը և գնումը ապրանքների և ծառայությունների շրջանառության վերահսկումն է, այդ թվում՝ ապրանքներն ու ծառայությունները գնելու կամ այդպիսիք վաճառելու միջոցով հանցագործության մասնակիցներին պարզելու նպատակով:»:

Այս համատեքստում, հարկ ենք համարում նշել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված գաղտնի քննչական գործողությունների իրականացման նպատակը տվյալ վարույթի համար նշանակություն ունեցող ապացույց ձեռք բերելն է:

Բացի այդ, հաշվի առնելով «վերահսկելի մատակարարում և գնում» գործողության բովանդակությունը՝ հարկ է ընդգծել, որ այն, ըստ էության, կարող է կատարվել միայն ապրանքներ և ծառայություններ գնելու կամ այդպիսիք վաճառելու եղանակով: Մինչդեռ, առաջարկվող ձևակերպման մեջ «այդ թվում» բառակապակցության օգտագործումը թույլ է տալիս ենթադրել, որ վերահսկելի մատակարարումը և գնումը կարող է իրականացվել նաև այլ եղանակներով: Հետևաբար՝ տարամեկնաբանությունները բացառելու նպատակով առաջարկում ենք նախագծով լրացվող՝ Քրեական օրենսգրքի 251.1-ին հոդվածի 1-ին մասը խմբագրել հետևյալ բովանդակությամբ.

«1. Վերահսկելի մատակարարումը և գնումը ապրանքների և ծառայությունների շրջանառության վերահսկումն է՝ ապրանքներն ու ծառայությունները գնելու կամ այդպիսիք վաճառելու միջոցով:»:

Բացի այդ, նախագծի ընդունման հիմնավորման համաձայն՝ վերահսկելի մատակարարումը և գնումը՝ որպես գաղտնի քննչական գործողության տեսակ ամրագրելը միտված է ապօրինի թմրաշրջանառության դեմ պայքարի շրջանակներում քրեական դատավարությունում ապացույցների հավաքման, ապացուցողական գործողությունների իրականացման համար առավել արդյունավետ պայմանների ստեղծմանը: Մասնավորապես՝ վերահսկելի մատակարարում և գնում գաղտնի քննչական գործողությունն անգնահատելի ապացույց կարող է լինել թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պատրաստուկների, պրեկուրսորների, խիստ

ներգործող կամ թունավոր նյութերի օրինական շրջանառության դեմ ուղղված հանցագործություններից որևէ մեկի հատկանիշներով նախաձեռնված քրեական վարույթներով:

Հաշվի առնելով նախագծով հետապնդվող նպատակը՝ գտնում ենք, որ անհրաժեշտ է նախատեսվող գաղտնի քննչական գործողության կատարման շրջանակը սահմանափակել բացառապես թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պատրաստուկների, պրեկուրսորների, խիստ ներգործող կամ թունավոր նյութերի օրինական շրջանառության դեմ ուղղված հանցագործությունների և զենքի, հրազենի կամ այլ հանրավտանգ նյութերի և առարկաների օրինական շրջանառության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ վարույթներով՝ հաշվի առնելով հիշյալ հանցակազմերի վերաբերյալ վարույթների աճը: Ընդ որում՝ անհրաժեշտ է գաղտնի քննչական գործողության կատարման շրջանակը սահմանափակել ոչ թե պայմանավորված հանցագործության օբյեկտով, այլ կոնկրետ հանցակազմերով, քանի որ օրինակ անհասկանալի է, թե շրջանառությունն արգելված թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսեր ցանելը կամ աճեցնելու (ՀՀ քրեական օրենսգրքի 404-րդ հոդված, ներառված է 40-րդ գլխում) վերաբերյալ վարույթով ինչու պետք է կատարվի վերահսկելի մատակարարում և գնում գաղտնի քննչական գործողությունը, կամ նույնիսկ կատարվելու դեպքում դրա արդյունքում ի՞նչ տեղեկություններ են պարզվելու: Մասնավորապես, քննարկվող գործողության բովանդակությունն այնպիսին է, որ դրա արդյունքում կարող է պարզվել միայն որևէ անձի կողմից շրջանառությունն արգելված կամ շրջանառությունից հանված առարկաներ գնելու (ձեռք բերելու) և վաճառելու (իրացնելու) վերաբերյալ տեղեկություններ:

Այսպես, «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի համաձայն՝ վերահսկելի մատակարարումը և գնումը ապրանքների և ծառայությունների շրջանառության վերահսկումն է, այդ թվում՝ ապրանքներն ու ծառայությունները գնելու կամ այդպիսիք վաճառելու միջոցով հանցագործության մասնակիցներին պարզելու նպատակով:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ առաջարկում ենք նախատեսվող գաղտնի քննչական գործողության կատարման շրջանակը սահմանափակել միայն ՀՀ քրեական օրենսգրքի 335-րդ (Հրազենի, դրա հիմնական բաղկացուցիչ մասերի, ռազմամթերքի և այլ նյութերի, սարքերի, առարկաների ապօրինի շրջանառությունը), 393-րդ (Թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պատրաստուկների կամ դրանց համարժեք նյութերի (անալոգի) կամ դրանց ածանցյալների ապօրինի շրջանառությունն իրացնելու նպատակով կամ դրանք ապօրինի իրացնելը), 394-րդ (Պրեկուրսորների ապօրինի շրջանառությունը թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր, դրանց պատրաստուկներ կամ դրանց համարժեք նյութեր (անալոգ) պատրաստելու նպատակով, պրեկուրսորների ապօրինի շրջանառությունն իրացնելու նպատակով կամ դրանք ապօրինի իրացնելը) և 405-րդ (Խիստ ներգործող կամ թունավոր նյութերի ապօրինի շրջանառությունն իրացնելու նպատակով կամ դրանք ապօրինի իրացնելը) հոդվածներով նախատեսված հանցանքների վերաբերյալ վարույթներով:

Միաժամանակ հարկ է նկատի ունենալ, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 242-րդ հոդվածի 3-րդ մասը նախատեսում է, որ գաղտնի քննչական

գործողությունները կարող են կատարվել ծանր կամ առանձնապես ծանր, ինչպես նաև կաշառք ստանալու կամ կաշառք տալու ենթադրյալ հանցանքների վերաբերյալ վարույթներով: Հետևաբար, հիշյալ նորմում բոլոր գաղտնի քննչական գործողությունների համար սահմանված ընդհանուր կանոնից անհրաժեշտ է նախատեսել բացառություն վերահսկելի մատակարարում և գնում գաղտնի քննչական գործողության համար՝ սահմանելով, որ վերջինս կարող է կատարվել միայն վերը նշված հանցանքների վերաբերյալ վարույթներով:

Բացի այդ, հիշյալի հետ փոխկապակցված լրացումներ են նախատեսվում նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 243-րդ հոդվածում՝ նախատեսելով այն սուբյեկտների շրջանակը, ում նկատմամբ կարող է իրականացվել նաև վերահսկելի մատակարարում և գնում գաղտնի քննչական գործողությունը, այն է.

«1) այն ֆիզիկական անձի նկատմամբ, որի վերաբերյալ առկա են ենթադրյալ հանցանք կատարելու մասին վկայող փաստեր.

2) մեղադրյալի նկատմամբ.

3) այն ֆիզիկական անձի նկատմամբ, որի վերաբերյալ առկա է հիմնավոր ենթադրություն այն մասին, որ մեղադրյալը պարբերաբար անմիջականորեն հաղորդակցվել է կամ ողջամտորեն կարող է հաղորդակցվել նրա հետ.

4) այն իրավաբանական անձի նկատմամբ, որի վերաբերյալ առկա է հիմնավոր ենթադրություն այն մասին, որ դրա գործունեությունն ամբողջությամբ կամ վերաբերելի մասով կառավարվում, վերահսկվում կամ որևէ կերպ փաստացի ուղղորդվում է սույն մասի 1-ին կամ 2-րդ կետով նշված անձի կողմից»:

Այսպես.

Հաշվի առնելով նախատեսվող գաղտնի քննչական գործողության բնույթն ու էությունը և նկատի ունենալով նախագծով նախատեսվող անձանց շրջանակը, ում նկատմամբ կարող է այն իրականացվել, մասնավորապես այն ֆիզիկական անձի նկատմամբ, որի վերաբերյալ առկա է հիմնավոր ենթադրություն այն մասին, որ մեղադրյալը պարբերաբար անմիջականորեն հաղորդակցվել է կամ ողջամտորեն կարող է հաղորդակցվել նրա հետ, կարծում ենք նպատակահարմար չէ, քանի որ այդ կերպ կարող են սահմանափակվել անորոշ թվով անձանց իրավունքներ: Մեղադրյալի կապն ու առնչությունը, անմիջական հաղորդակցումը դեռևս բավարար չեն ֆիզիկական անձի իրավունքի սահմանափակման համար, քանի որ այդ կերպ մեղադրյալի կամ ենթադրյալ հանցանք կատարած անձի հետ ցանկացած շփում ունեցած անձի իրավունք կարող է անհիմն և անհամաչափ կերպով սահմանափակվել, և միաժամանակ պարզ չէ, թե այդ անձի նկատմամբ իրականացվելիք վերահսկելի մատակարարում և գնում գաղտնի քննչական գործողության արդյունքները ապացուցողական ինչ նշանակություն կարող են ունենալ:

Այս կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ Եվրոպական դատարանը անձի իրավունքի սահմանափակման իրավաչափությունը գնահատելիս հաշվի առնվող հանգամանքների շարքում առանձնացնում է անձի կապը քրեական վարույթի հետ և նրա կողմից հանցանք կատարած լինելու կասկածի առկայությունը[1]: Այն դեպքում, երբ անձը քրեական վարույթի սուբյեկտ չէ, և նրա կողմից հանցանք կատարած լինելու վերաբերյալ հստակ կասկածներ առկա չեն, ըստ էության պահանջվում են նրա իրավունքի

սահմանափակման ավելի բարձր հիմնավորումներ, որպեսզի ապահովվի համաչափության սկզբունքը:

Նման պայմաններում կարծում ենք, որ հիշյալ գաղտնի քննչական գործողության սուբյեկտների շրջանակից պետք է բացառել այն ֆիզիկական անձին, որի վերաբերյալ առկա է հիմնավոր ենթադրություն այն մասին, որ մեղադրյալը պարբերաբար անմիջականորեն հաղորդակցվել է կամ ողջամտորեն կարող է հաղորդակցվել նրա հետ:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ առաջարկում ենք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 243-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-ին մասով՝

«Սույն օրենսգրքի 241-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով նախատեսված գաղտնի քննչական գործողությունները կարող են կատարվել՝

1) այն ֆիզիկական անձի նկատմամբ, որի վերաբերյալ առկա են ենթադրյալ հանցանք կատարելու մասին վկայող փաստեր.

2) մեղադրյալի նկատմամբ.

3) այն իրավաբանական անձի նկատմամբ, որի վերաբերյալ առկա է հիմնավոր ենթադրություն այն մասին, որ դրա գործունեությունն ամբողջությամբ կամ վերաբերելի մասով կառավարվում, վերահսկվում կամ որևէ կերպ փաստացի ուղղորդվում է սույն մասի 1-ին կամ 2-րդ կետով նշված անձի կողմից:»:

---

[1] Տե՛ս M.N. and Others v. San Marino գործով 07.07.2015թ. վճիռ, գանգատ թիվ 28005/12, կետ 77/:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 194 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ)
ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Գևորգ Քոչարյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-1227-24.12.2025-ՊԻ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

06.03.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

Պ-1227-24.12.2025-ՊԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2021 թվականի հունիսի 30-ի Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 196-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «դատախազը» բառից հետո լրացնել «յոթնօրյա ժամկետում» բառերով,

2) 2-րդ մասում «դատախազը» բառից հետո լրացնել «յոթնօրյա ժամկետում» բառերով:

Հոդված 2. Օրենսգրքի 197-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքում քրեական հետապնդում չհարուցելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը հսկող դատախազը կայացնում է քննիչի միջնորդությամբ՝ միջնորդությունը ստանալուց հետո՝ յոթնօրյա ժամկետում կամ իր նախաձեռնությամբ՝ վարույթի նյութերի հիման վրա:»:

Հոդված 3. Օրենսգրքի 241-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի 6-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով,

2) 1-ին մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 7-րդ կետով.

«7) վերահսկելի մատակարարումը եւ գնումը:»:

Հոդված 4. Օրենսգրքի 243-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասում «1-4-րդ» բառերից հետո լրացնել «եւ 7-րդ» բառերը,

2) 5-րդ մասում «1-5-րդ» բառերից հետո լրացնել «եւ 7-րդ» բառերը:

Հոդված 5. Օրենսգիրքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 251.1-ին հոդվածով.

«Հոդված 251.1. Վերահսկելի մատակարարումը եւ գնումը

1. Վերահսկելի մատակարարումը եւ գնումը ապրանքների եւ ծառայությունների շրջանառության վերահսկումն է, այդ թվում՝ ապրանքները կամ ծառայությունները գնելու կամ այդպիսիք վաճառելու միջոցով ենթադրյալ հանցագործության մասնակիցներին պարզելու նպատակով:»:

Հոդված 8. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը, իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը եւ առաջարկվող կարգավորման բնույթը.

Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների ծրագրի նախաբանում նշված է, որ ի թիվս այլնի արդյունավետ եւ որակյալ նախաքննությունը պիտի ապահովի Կառավարության՝ ժողովրդից ստացած մանդատի իրագործումը: Հարկ է նկատել, որ դատական եւ իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարությունից բխող գործողությունների ծրագրի 5-րդ նպատակը քրեաիրավական ոլորտի բարեփոխումներն են եւ ռազմավարական ուղղություններից է նաեւ քրեական եւ քրեական դատավարության նոր օրենսգրքերի պրակտիկ կիրառման ապահովումը, քննչական մարմինների համակարգի բարեփոխումը: 2022թ. հուլիսի 1-ից ուժի մեջ մտած քրեական դատավարության օրենսգրքի նպատակն անձի իրավունքների եւ ազատությունների երաշխավորման վրա հիմնված՝ ենթադրյալ հանցանքների վերաբերյալ վարույթի իրականացման արդյունավետ կարգի սահմանումն է: Որպես այդպիսին արդյունավետ եւ որակյալ նախաքննության իրականացումը հենց բխում է այս նպատակից: Հարկ է նշել, որ արդեն շուրջ երեք տարի կիրառվող քրեական դատավարության օրենսգիրքում որոշակիորեն խնդրահարույց կարգավորումների առկայությունը լրացուցիչ խոչընդոտներ է առաջացրել, որի վերացմանն էլ ուղղված է սույն օրենքի նախագիծը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 196-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն օրենսգրքի 12-րդ հոդվածով սահմանված՝ քրեական հետապնդումը բացառող հանգամանքներից որեւէ մեկի առկայության դեպքում քննիչը միջնորդություն է ներկայացնում քրեական հետապնդում չհարուցելու կամ այն դադարեցնելու մասին, որի հիման վրա հսկող դատախազը որոշում է կայացնում այն բավարարելու կամ մերժելու մասին: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե նախաքննության ընթացքում հիմնավորվում է մեղադրանքի որեւէ մասով քրեական հետապնդումը դադարեցնելու անհրաժեշտությունը, ապա քննիչը հսկող դատախազին միջնորդություն է ներկայացնում այդ մասով քրեական հետապնդումը դադարեցնելու մասին: Այդ միջնորդության հիման վրա հսկող դատախազը որոշում է կայացնում այն բավարարելու կամ մերժելու մասին:

Ինչպես նկատելի է գործող կարգավորումների բովանդակությունից՝ սույն խնդրով բացակայում են հստակ դատավարական ժամկետները, ինչը պրակտիկայում կարող է առաջացնել խնդիրներ՝ դատախազը անորոշ ժամկետով կարող է որոշում չկայացնել, որի արդյունքում հանրային քրեական հետապնդման ենթակա անձը այդ կարգավիճակում կարող է անարդարացիորեն երկար մնալ, անձի նկատմամբ կարող է կիրառված լինել խափանման միջոց, ընդ որում ազատության սահմանափակմամբ, որի անհիմն երկարելը ոչ միայն ներպետական օրենսդրության, այլեւ կոնվենցիոն խախտում է: Հարկ է նշել, որ առկա է ՀՀ գլխավոր դատախազի 15.04.2025թ. 20/2(5)-5-2025 հանձնարարական, որի 1.3-րդ կետի համաձայն՝ համապատասխան դատախազները պետք է ապահովեն, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 196-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ քրեական հետապնդումը բացառող հանգամանքներից որեւէ մեկի առկայության դեպքում, քննիչի միջնորդությունը դատախազությունում մուտքագրվելուց հետո, հսկող դատախազը 7-օրյա ժամկետում համապատասխան որոշում կայացնի: Թերեւս օրենքի բացակայության պայմաններում սա համարվում է միջանկյալ լուծում, սակայն քրեական դատավարության կառուցվածքի միասնականությունը, դատավարական ժամկետների՝ դատավարությամբ ամրագրված լինելու հանգամանքը պայմանավորում են սույն հարցի կարգավորում օրենքով, ուստի առաջարկում եմ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 196-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «դատախազը» բառից հետո լրացնել «յոթնօրյա ժամկետում» բառը,

2) 2-րդ մասում «դատախազը» բառից հետո լրացնել «յոթնօրյա ժամկետում» բառը:

Այս խնդիրը համակողմանի լուծելու անհրաժեշտությամբ պայմանավորված լրացում եմ առաջարկում նաեւ հայեցողական քրեական հետապնդման դեպքում՝ միայն այն ժամանակ, երբ հսկող դատախազը քննիչի համապատասխան միջնորդության ներկայացման պարագայում քրեական հետապնդում չհարուցելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը է կայացնում: Այսպես՝ առաջարկում եմ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 197-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ. «2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքում քրեական հետապնդում չհարուցելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը հսկող դատախազը կայացնում է քննիչի միջնորդությամբ՝ միջնորդությունը ստանալուց հետո՝ յոթնօրյա ժամկետում կամ իր նախաձեռնությամբ՝ վարույթի նյութերի հիման վրա:»:

Ապօրինի թմրաշրջանառության դեմ պայքարը պետության՝ հանցավորության դեմ պայքարի առաջնահերթ ուղղություններից է ու այս խնդրով իրավաստեղծ աշխատանքում անընդմեջ իրականացվող բարեփոխումները միտված պետք է լինեն նաեւ քրեական դատավարությունում ապացույցների հավաքման, ապացուցողական գործողությունների իրականացման համար առավել արդյունավետ պայմանների ստեղծմանը: «Օպերատիվ հետախուզական գործունեության մասին» օրենքի 19-րդ հոդվածով սահմանված է վերահսկելի մատակարարում եւ գնում օպերատիվ-հետախուզական միջոցառումը, որի իրականացման արդյունքում փաստի վերաբերյալ ստացված տվյալը քրեադատավարական օրենքի իմաստով ապացույց չի հանդիսանում: Այսպես՝ քրեական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի համաձայն՝ Օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքով կազմված փաստաթղթերը եւ որեւէ կրիչի վրա ամրագրված տվյալները քրեական վարույթում ապացույց չեն: Քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 40-րդ կետի համաձայն՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումները «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով սահմանված օպերատիվ-հետախուզական միջոցառում է, որի իրականացման համար դատարանի որոշում չի պահանջվում: Փաստորեն վերահսկելի մատակարարում եւ գնում օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքում կազմված փաստաթղթերը եւ որեւէ կրիչի վրա ամրագրված տվյալները (միջոցառման իրականացման համար դատարանի թույլտվություն անհրաժեշտ չէ) քրեական դատավարությունում ապացույց չեն համարվում:

«Թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի մասին» ՄԱԿ-ի 1988 թվականի կոնվենցիայով (1-ին հոդվածի է) կետ, 11-րդ հոդված), «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» ՄԱԿ-ի 1957 թվականի կոնվենցիայով (2-րդ հոդվածի թ) կետ, 20-րդ հոդված), որոնց նպատակը համապատասխան ոլորտերում պայքարի արդյունավետ միջոցների նախատեսումն է, նախատեսված է այնպիսի գաղտնի միջոցառման իրականացման հնարավորություն, ինչպիսին է վերահսկելի մատակարարումը (հսկվող առաքումը):

Ըստ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի՝ նախնական դատական վերահսկողությունը որպես առավել ընդունելի երաշխիք է գնահատվում վերահսկելի մատակարարում եւ գնում եւ նմանաբնույթ այլ գաղտնի միջոցառումների իրականացման դեպքում:

Հարկ է նկատել, որ գաղտնի քննչական գործողությունների արդյունքներն ինքնին ապացույց են եւ վարույթի ընթացքում դրանք օգտագործելու համար հավելյալ դատավարական ընթացակարգեր անցնելու անհրաժեշտություն չկա: Վերահսկելի մատակարարում եւ գնում միջոցառումը ըստ էության ամբողջությամբ գաղտնի քննչական գործողության բնույթ կարող է ունենալ, եթե օրենսդրական այս փոփոխություններով դրանք ամրագրվեն քրեական դատավարությունում:

Այսպես՝ թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պատրաստուկների, պրեկուրսորների, խիստ ներգործող կամ թունավոր նյութերի օրինական շրջանառության դեմ ուղղված հանցագործություններից որեւէ մեկի հատկանիշներով նախաձեռնված քրեական

վարույթներով անգնահատելի ապացույց կարող է լինել վերահսկելի մատակարարում եւ գնում գաղտնի քննչական գործողության իրականացման արդյունքում ստացվող ապացույցը, ուստի առաջարկում եմ քրեական դատավարության օրենսգիրքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 251.1-ին հոդվածով.

«Հոդված 251.1. Վերահսկելի մատակարարումը եւ գնումը

1. Վերահսկելի մատակարարումը եւ գնումը ապրանքների եւ ծառայությունների շրջանառության վերահսկումն է, այդ թվում՝ ապրանքները կամ ծառայությունները գնելու կամ այդպիսիք վաճառելու միջոցով ենթադրյալ հանցագործության մասնակիցներին պարզելու նպատակով:»: Այս նորմի հետ փոխկապակցված լրացումներ են նախատեսվում նաեւ քրեական դատավարության օրենսգրքի 243-րդ հոդվածի համապատասխան մասերում:

2. Նախագծի ընդունմամբ ակնկալվող արդյունքը.

Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է ստեղծել լրացուցիչ նախադրյալներ քրեադատավարական գործառույթների առավել արդյունավետ իրականացման համար: Նախագիծը ըստ էության կարգավորելու է նաեւ հստակ ժամկետային եւ ընթացակարգային հարցեր քրեական դատավարությունում, որը միտված է նաեւ քրեական վարույթի արդյունավետ, լրիվ, բազմակողմանի եւ օբյեկտիվ քննությանը: Բացի այդ, սույն նախագծով ակնկալվում է նաեւ հնարավորություն ստեղծել քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից իր իրավասությունների սահմաններում վարույթը ողջամիտ ժամկետում ավարտելու:

3. Իրավական ակտի նախագիծը մշակող պատասխանատու մարմինը.

Նախագիծը մշակվել է ՀՀ ԱԺ պատգամավոր Ռուստամ Բաքոյանի կողմից: Նախագիծը քննարկվել է ՀՀ դատախազության, ՀՀ քննչական կոմիտեի, ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի, ՀՀ արդարադատության նախարարության, ՀՀ ներքին գործերի նախարարության եւ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հետ: